**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/8» ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան 24.05.2018թ.

ժամը 10 30

Մասնակիցներում էին՝

**Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝**

- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության պետ, գնդապետ Հ. Կարապետյան,

**Գնահատողներ՝**

- ՀՀ ԶՈՒ ԱՎ ՁՏԾ հաշվառման բաժնի ավագ սպա՝ փոխգնդապետ Կ. Ավետիսյան,
- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ՀՀԱ, ՁՏ և ԱՏ միջոցներով ապահովման բաժնի առաջատար մասնագետ Ն. Չախալյան,
- ՀՀ ՊՆ ՌՈ ՀՕԾ բաժնի ավագ սպա, մայոր Հ. Բարսեղյանը նիստից բացակայում է,
- ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրուտյան,

**Գնումները համակարգող՝**

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի բաժնի պետի տեղակալ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Ա. Բաղրամյան:

**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Ա. Բաղրամյան)

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:**

**1. Մասնակցի՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.**

---

(Ա. Բաղրամյան)

1.1 **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/8»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին մասնակիցների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են սակայն ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

**«ՆԱՐՆԻԿ»** **ՍՊԸ**-ի կողմից.

- 33-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը ներկայացված է թերի՝ մասնավորապես արտադրողի անվանման և ապրանքային նշանի մասին հրավերով պահանջված տեղեկությունները նշված չեն,
- Հավելված 6 ներկայացվել է էլեկտրոնային ստորագրությամբ, իսկ Հավելված 6.1 ներկայացված է առանց էլեկտրոնային ստորագրության:

**«Պրովայդր» ՍՊԸ**-ի կողմից.

- ներկայացված փաստաթղթերում բացակայում է 10-րդ չափաբաժնի մասով որակավորման պահանջների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:
- Հավելված 6.1-ում անհրաժեշտ է հստակեցնել Ձեր կողմից նշված 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով արտադրողի անվանումը:

**Ա/Ձ Հենրիկ Պետրոսյանի** կողմից.

Հավելված 6.1-ում բոլոր ապրանքատեսակների մասով նշված չէ իրավերով պահանջվող ապրանքային նշանը:

***ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն:***

Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկում է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:**

**30.05.2018թ-ին գնահատող հանձնաժողովը շարունակեց աշխատանքները.**

Սահմանված ժամկետում **Ա/Ձ Հենրիկ Պետրոսյանի** կողմից ներկայացվեց շտկված տարբերակները, որոնք ընդունվեցին գնահատող հանձնաժողովի կողմից: **«Պրովայդր» ՍՊԸ**-ի կողմից սահմանված ժամկետում անհամապատասխանության շտկումներ չի ներկայացրել, իսկ **«ՆԱՐՆԻԿ» ՍՊԸ**-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացված շտկված տարբերակում կրկին առկա էր անհամապատասխանություններ, մասնավորապես՝ տեխնիկական բնութագրում կրկին նշված չէր արտադրողի անվանման և ապրանքային նշանի մասին իրավերով պահանջված տեղեկությունները: Գնահատող հանձնաժողովը Կարգի 48-րդ կետի 2-րդ մասի պահանջները որոշեց մերժել **«ՆԱՐՆԻԿ» ՍՊԸ**-ի հայտը 33-րդ չափաբաժնի մասով և **«Պրովայդր» ՍՊԸ**-ի հայտը 1-ին, 2-րդ և 10-րդ չափաբաժնի մասով: Միաժամանակ գնահատող հանձնաժողովը որոշեց 1-ին 2-րդ և 33-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած, իսկ մերժված 10-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել **Ա/Ձ Հենրիկ Պետրոսյանին** և վերջինիս առաջարկել ներկայացնելու **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/8»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի իրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:**

**04.06.2018թ-ին գնահատող հանձնաժողովը շարունակեց աշխատանքները.**

Սահմանված ժամկետում և կարգով 10-րդ չափաբաժնի մասով **Ա/Ձ Հենրիկ Պետրոսյանի** կողմից ներկայացվեց **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/8»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի իրավերով պահանջվող որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, որոնք ընդունվեցին գնահատող հանձնաժողովի կողից:

1.2 Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց **Ա/Ձ Հենրիկ Պետրոսյանի և «Պրովայդր»** ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/8»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի իրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակիցներ 3, 10, 16, 17, 18, 19, 20, 21, 22, 23, 24, 25, 26, 27, 35, 36, 37, 38, 39, 40, 41, 42, 43 և 44-րդ չափաբաժիններում **Ա/Ձ Հենրիկ Պետրոսյանին** իսկ 11, 12, 13, 14, 15 և 63-րդ **«Պրովայդր» ՍՊԸ**-ին և անգործության ժամկետի ավարտից հետո վերջիններիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/8»** ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:**

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ա. Բաղրամյան)

**2.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/8»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրերի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:**

| | |
|---|---|
| **Գնահատող, (ԳԱՊ)** | Հ. Կարապետյան |
| **Գնահատող,** | Կ. Ավետիսյան |
| **Գնահատող** | Ն. Զախարյան |
| **Գնահատող** | Կ. Բրուտյան |
| **Գնումները համակարգող՝** | Ա. Բաղրամյան |